կովկասու բարձանց վրայ, ուր երբեմն արծիւն պատռած էր Պռոմիթէոսի սիրտը, նոյն տանջանքը զգացի և ես։ Անտեսանելի արծիւն կը պատռէր իմ սիրտս. բորբոքումն թորի և կրծոց։ Ձեպընթաց կառքին, որով կ'երթայի, ամէնմի ցնցման, աչքէն մի հառաչելու, ձեռքով շարժում մի բրած միջոցիս, ինձ այնպէս կ'երևէր, որ մէկը աքցանով թորս կը փրցընէ։

Ի Ռոստով բոլորովին ինքդինքս կորուսի. ես ինքս չեմ գիտեր անտի մինչև ցՌոստրբուրգ գնալս։

Այժմ ես հոս եմ, ի Մինթոն, երկնագոյն ծովուն եզերքը։ Ձիս հոս բերին՝ որպէս զի Արարատայ ինձմէ յափշտակածը նորէն ետ դարձընեմ։ Այլ կատարեալ դարձ այժիս՝ տարակուսելի է։ Ահ, թէ չուտով տուն դառնայի . . .

Այս է դառն պատմութիւնն Արարատայ վրայ ելնելու իմ փորձիս։

Թարգ. Հ. Ֆ. Վ. Քուշնարեան

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ԱՌ ՏԻՐԱՄԱՑՐՆ ՀԱՅՈՑ* Ի ԿԱՄԵՆԻՑ ՓՈՏՈԼԵԱՆ

Օգոստոս 16. — Սեպտեմբեր 16. 1883։

ՅԱՌՈՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Լեհաստան աշխարհն՝ ԺԱ դարէն սկսեալ՝ մեր ազգին Հայ գաղթականաց ապաստանարան եղած է. ուր մեծամեծ արտաքնութիւններ վայելած են բազմաթիւ ազգայինք, քանի քանի անգամ թռղած իրենց հայրենիքը, իրենց փառաշէն Անին, երկրորդ հայրենիք ընտրած են այդ աշխարհքը։ Նշանաւոր են սոր երկու քաղաքները, կալիցիոյ մէջ Իլվով (կամ ըստ մեր ձեռագրաց Լով) որ այժմ գերմանական անուամբ Լէմպերկ կը կոչուի, փոտոլիոյ Նահանգին մէջ Կամենից, զոր Հայք շինած և շէնցուցած են, և 600 տարի Հայոց քաղաք համարուած է։ Յամին 1876, հոկտեմբեր ամսոյն մէջ, ճանապարհորդութեամբ եղած էի Իլվով, ուր ցարդ կանգուն կայ ազգային փառաւոր եկեղեցին, հանդերձ Լուսաւորչայ խորանով, ուր կը նստի և Հայոց արքեպիսկոպոս, յիւրում վեհարանին, ունի իրեն կղերանոցը, ուր կայ և ցարդ Հայոց կուսանաց վանք, որոյ մայրապետք օրիորդաց դաստիարակութեան կը պարապին։ Նոյն ժամանակի թեմական առաջնորդն էր գերապատիւ Տէր Գրիգոր Ռոմաշքան, որ մեծաւ մարդասիրութեամբ հիւրընկալեց մեր նուաստութիւնը։ Իլվովոյի Հայոց մէջ այն ատեն միայն երկու անձինք կային որ լաւ Համարձակ կը խօսէին հայերէն, առաջինն անուշտ ինքն էր Գերապատիւ Տէրն, իսկ երկրորդն՝ կուսանաց վանքին պառաւեալ Մայրը՝ Վարդուհի, որ մեծ հաճութեամբ ալ կը խօսէր ազգային լեզուն։ Անշուշտ այժմ տեղացի երիտասարդ քահանայք ևս կը խօսին իրենց բնիկ լեզուով, վասն զի մեծ ջանք տեսայ ես նոցա մէջ հայերէն լեզուի մշակութեան, շնորհիւ Արհիապատիւ Հանգուցելոյն։ Գրաբար լեզուիս անսայթաք ընթերցանութիւնը ժամասացութեան մէջ՝ հաստատք են գրածիս։

Ցիրաւի՝ ինչպէս ես, նոյնպէս կարծեմ ամենայն ազգային ճանապարհորդ, նոր տեսակ մի զգացումն կ'ունենայ կուսանաց վանք, որոյ մայրապետք օրիորդաց դաստիարակութեան կը պարապին։ Նոյն ժամանակի թեմական առաջնորդն էր գերապատիւ Տէր Գրիգոր Ռոմաշքան, որ մեծաւ մարդասիրութեամբ հիւրընկալեց մեր նուաստութիւնը։ Իլվովոյի Հայոց մէջ այն ատեն միայն երկու անձինք կային որ լաւ Համարձակ կը խօսէին հայերէն, առաջինն անուշտ ինքն էր Գերապատիւ Տէրն, իսկ երկրորդն՝ կուսանաց վանքին պառաւեալ Մայրը՝ Վարդուհի, որ մեծ հաճութեամբ ալ կը խօսէր ազգային լեզուն։ Անշուշտ այժմ տեղացի երիտասարդ քահանայք ևս կը խօսին իրենց բնիկ լեզուով, վասն զի մեծ ջանք տեսայ ես նոցա մէջ հայերէն լեզուի մշակութեան, շնորհիւ Արհիապատիւ Հանգուցելոյն։ Գրաբար լեզուիս անսայթաք ընթերցանութիւնը ժամասացութեան մէջ՝ հաստատք են գրածիս։

* Այսպէս է անուն պատկերին ընդ համարէն Լեհաստան, Matka Boska Armiańska.

digitised by A.R.A.R.@

նենայ, երբ Եւրոպայի անկիւն մի՛ հանդիպի ազգային հաստատութեան, մի ուր ազգային լեզուն հնչէ ականջաց մէջ, ուր ազգային եկեղեցի մի ամբառնայ աչաց դիմաց։ Այդ սրտամերձ և մտահաճոյ զգացումը՝ ոչ վեհութեան, ոչ գեղեցկութեան և ոչ փարթամութեան զմայլումն կամ ախորժումն է, այլ ներքին և բնածին իմն զգացումն, զոր չեն կարող տալու ոչ փառահեղ տաճարք օտարաց, ոչ երկնաբերձ կոթողք կամ բրգունք, և ոչ իսկ ներդաշնակ երաժշտութիւնք, զի առ այն, ըստ ռամիկ բացատրութեան՝ Մարդուս աբրիւնը կը քաշէ։

Ահա այդ զգացմամբ տրոփեց սիրտս, երբ վկնի տեսանելոյ Եւրոպայի հոյակապ տաճարները Ս. Պետրոս, Ս. Պօղոս Հռովմայ, Տիրամօրն Փարիզու, ոսկեգմբէթն Անկարողաց (des invalides), Ս. Մարկոս Վենետկոյ, Մայր եկեղեցին Միլանու, Ս. Սոֆիա Կ. Պոլսոյ, Ս. Յոտեփանոս Վեննայի, տեսայ հեռուէն տիրագոյն եկեղեցին Հայոց Իվրիի. այն զգացումը տանուլատանելոյ՝ երբ վաղ առաւօտու երիցունք շարուած՝ ի դատն Ժամասացութիւնք սկսան, վայելուչ ձեւով, շարականները գնացք երգելով, այլ ամենայն բառ ու բոլոր և գեղեցիկ արտասանելով։ Այդ տաճարին մի անկիւնը քաշուած, ուշադրութեամբ կը փափաքէի միտ դընել պաշտաման. սակայն հարկ է խոստովանիլ, թէ և անձամբ ներկայ, ըսելեացս մէջ կը հնչէին հայկական բառեր, այլ մտաք բաղմադարեան պատմութեան մէջ կը ծփայի, հազարաւոր մղոն հեռուն, բացրատունիք, նոցա ոստանը Անին, և այլն, փոխն՝ ի փոխ կը պատկերանային մտացս մէջ։

Ժամերգութենէ վերջը յայտնեցի սրտիս գոհութիւնը Գերապատիւ աստպենիսկանին, որ մեծապէս հաճեցաւ, և երկու օր մնալով յիլվով, երկաթի ճամբով դէպ՝ ի կամենից ճանապարհ ելայ։ Հասայ Փատ—Վոլոչիսկ, որ սահման է ընդ մէջ Աւստրիոյ և Ռուսիոյ. ասի կամենից գնալու երկաթի ճանապարհ չկայ և ոչ խճաքար ճամբայ։ Աշնանային անձրևոտ էր օդն. ճանապարհին ծանրութիւն զգուշացուցին զիս, զի վաթսուն վերստ պէտք էր կառքով գնալ՝ ի կամենից, և այդ վաթսուն վերստը՝ անհնարին ցեխին պատճառաւ՝ երբեմն հարկ կը լինի օրերով ճամբայ մնալ, անձրևի ներքոյ։ Օդոյն անհարթութեանց դէմ ևս՝ ճանապարհի լաւ պատապարութիւն չունենալով, խոհեմութիւն համարեցայ ուրիշ յարմար միջոցի թողուլ՝ ի կամենից ճանապարհորդութիւնս, և ուղղեցի ընթացքս յՕտեսսա և անտի՝ ի Թէոդոսիա։

Հարկ եղաւ սպասել այլ ևս եօթը տարի և հա այս ամառ (1883) ամսօրեայ արձակուրդ և անցագիր, միանգամայն և յանձնարարական նամակ մի առնելով, առ տեղական վարչութիւնս՝ ի կամենից և՝ ի Քիէվ, ՝ի կողմանէ Աքքունի հնագիտական ընկերութեան Օտեսսայի, օգոստոս ամսոյն 14ին, երեկոյեան շոգենաւով ճամբայ ելայ՝ ի Թէոդոսիոյ՝ յուխտագնացութիւն առ Տիրամայրն Հայոց՝ ի կամենից։

Օգոստոս 16 թէպէտ Ռուսաստանի համար աշունք է, այլ Ղրիմու համար դեռ ամառն. սակայն այն օրը՝ կարծես Ռուսաստանի աշունք կը շնչէր. խոնաւէր օդն, մութ և անլուսին գիշեր, աստղերն՝ իբրև ադօտ լապտերներ շարուած էին երկնից կապոյտին վրայ, և՝ ի խոնարհ դէպ՝ ի հորիզն՝ քաղաքիս տանց ճրագներուն խառնուելով, շարունակութիւն կը գործէին երկնաւոր լոյսերը՝ երՀրաւորաց, և երկոյզնց անդրադարձութիւնը՝ ի ծովուն՝ երրորդ շարք մի էր լուսերու. սակայն և այնպէս՝ այս երեք կարգ լոյսերն միանալով՝ չէին բաւական գիշերուան մթութիւնը ոչ միայն փարատելու, այլ և ոչ մեղմելու։ Մութ գիշերն՝ մութ մութ խորհուրդներ կը յարուցանէր մտացս մէջ։ Մերձաւորաց, բարեկամաց հրաժարականս տալով՝ առանձնացած էի նաւուն բարձրաւանդակին մի կողմը,

digitised by A.R.A.R.@

երևակայութեանս մէջ կը պատկերանային բազմութիւն Անեցի գաղթականք, որք իբր թէ Թէոդոսիոյ ափանց վրայ վիտային. նոցա համար պատրաստ մակոյկները, կարծես ափանց մօտ կ'երևցային անհամբերատ կոհակաց վրայ։ Այս աշխարհն՝ որ ասկէ ութ դար առաջ թատր մի եղած է ազգիս զանազան ողբերգութեանց, այն այս տիրներն (կ'սրսճայի մնոք) իրենց շալակաց վրայ առած բիւրաւոր Անեցիք, տարած ձգած են 'ի հեռաւոր՝ հիւսիսական աշխարհներ։ Հաւանական է որ մեծ մասն Անեցի գաղթականաց նոյն ճամբով անցել գնացել էին, որով ես երթալ մտադիր էի։

Բայց որչափ տարբերութիւն այժմեան և դարերով առաջ Անեցւոց հատած ճանապարհին մէջ։ Ո՛ւր այն ատեն չոգենաւ, ուր շոգեկառք ... բազմաթիւ ժողովուրդ մի հուրէ, թուրէ, ժաժէ՝ փախստական, յօտարութենէ յօտարութիւն, հետերնին առած գերեզմանաց խաչքարինք[1] 'ի յիշատակ անգին վաղամեռիկ սիրելեաց, եկեղեցեայ գաներ, հրաշագործ Զարիսափաև, Հաձկատար, Ռէխտակատար Աստուածամօր պատկերներ, կ'երթան և չդիտեմ ուր ... ։ Շոգենաւն երրորդ անգամ սուլելով՝ նաւամատոյցէն կը բացուէր դէպ 'ի ծով, այլ աչաց կամ՝ լաւ ևս մնացս առաջ, գարձեալ նոյն հին Անեցւոց ստուերներ կը տարուբերէին։ Ծերք, պառաւներ՝ գաւազաններու վրայ կռթնած, շատ մանկամարդք և բազմութիւն օրիորդք՝ « Առաւօտեան լուսի նման յանկերով[2] », և այլ շատ երիտասարդք նորատեղ մօրուք՝ « Սիրա. կանթեղ և լուսափայլ աչերով », որը կը թիավարէ, որը բեռներ կը կրէ ... ։ Առաջ գնացել էր նաւն, մուխ – կապոյտ՝ այլ ատեղաղարդ երկինքն վերև, սև – կապուտակ ծովն ստորև. ճանապարհորդք ամէնքն իրենց ննջարանները քաշուած, խմացայ որ ինձ ևս քաշուելու ատեն է, զի խոնաւ օդն կրնար վնասել։ Ելայ նստած տեղէս, աչացս հանդիպեցաւ հիւսիսակողմն՝ երկնից վրայ մեծ արջ համաստեղութիւնն, որ անտարբեր՝ աղօտ լոյսը կու տիրէր ծովուն երեսը. անտարակոյս ասկէ ութ դար առաջ այն այս համաստեղութիւնն իւր տեղը կեցած դիտած էր մեր Անեցւոց գաղթը ...

Դու ինձ պատմէ երկնից Սայլիկ,
Մբաքէս ասի, կ'ապաչեմ՝ քեզ.
Դուն որ այդպէս թատառած երկինք
Ի ծով, ցամաք լոյս կու սրփռես.
Անշուշտ՝ տեսար, առաջ ութ դար,
Ծովուն երես երեր – տատան,
Մեր Անեցի քուրերն ու աղբար,
— Ո՛ւր գընացին կամ ինչ եղան։ —
Դուն լրսեցիր նոցա գանգատ,
Անէծք և իղձք, լայն, հառաչանք,
Մրրմունջ սրբոյց, երգ սիրակաթ.
— Ասա, դու ինձ մի խօսք միակ. —
Արդեօք նոցա սրբոյն խորեր,
Դեռ կայ նշչան մի հայութեան.
Թէ չէ, աւաղ, բնաւ անտարբեր
Բալբրովին օտարացան։
Դուն լրսեցիր անշուշտ շատ հեղ
Նոցա բերնէ Անի անուն.
Եւ անբղդայ, դու Եօթնատեղ,
Եղար նոցա սրբոցատերուն։
Օտար երկիր թափառական,
Մեր եղբայրներ, անտուն, անտէր,
Ի ծով, ցամաք հալածեցան,
Դուն նայեցար միշտ անտարբեր։
Շատ պառաւներ, այլ շատ ծերեր,
Ցեսողք Անի շահաստանին,
Մինչև իրենց վերջի օրեր,
Անին մոքէ չըհանեցին։
Հարկաւ նոքա երբ յիշէին
Այն մեծ քաղաքն սիգապանծ,
Խոր կը խոցուէր հայ սրտերնին,
Այլ դու մնացիր միշտ անբղդած։
Այլ ես ըղբեղ վրկայ կ'առնում,
Աստղ անբարբառ և անբղդայ,
Ակնատեսդ մեր ցաւերուն՝

1 Թէոդոսիոյ հնութեանց Թանգարանին մէջ քառակուսի յասպիս խաչքար մի կայ 857 տարուան, յորում խաչին պատուանդանին վրայ, կայ փորագրուած. Բարեհաւաս է սուրբ Երշանս Գրիգորին և իւր զաւակին. ՆՀՁ։

2 Իմաստական զրնմեցի երգ։

Կեցիր քո տեղդ, մինչ ասեն գոյ՝
Որ քու տեսած այդ թըշուառ աղքն,
Ցօտարութեան ցանած ցըրուած,
Մէկ մ՚արիշնոյ ճանչնայ իւր յարգ,
Եւ նորոգի լուսով ուսմանց.
Ա,ն ժամանակ դարձեալ այդպէս
Դուն անտարբեր երկինք թաւած
Նայէ, լինիս ականատես
Ցուսանորոգ աղքիս փառաց։

Այն և այսոր նման այլ մտածութիւնք գիրար կը յաջորդէին մտայս մէջ. մինչ քաղցրիկ քունն վերջ տուաւ ցնորից երևակայութեան։

Ա.

ԵԱԼԸԹԱՑԻ ՄԻՆՉԵՒ ՑՕՏԵՍՍԱ

Առաւօտը մութնուլուսին՝ զմեզ կրող նաւն հասաւ Ղրիմու հարաւային ափանց նշանաւոր քաղաքը Եալըթա[1], որ ամսրանց է արքայից Ռուսաց, ուր կը յաճախեն ամէն տարի հաղարաւոր օտարականներ՝ կորուսեալ առողջութիւնին վերստին ստանալու, բարեխառն և ջերմին կլիմայիւ և առողջարար խաղողով։ Երբ ահագին շառաչմամբ խարիսխ ձգեց նաւն ծովածոցոյն մէջ, իսկոյն վեր ելայ՝ վայելելու Եալըթայի ակնապարար տեսիլը։ Սա՝ յիրաւի իւր գեղեցիկ ծոցովն մշտադալար լեռներով, գեղեցկաշէն ապարանքներով և ճենացի վերնատուններով, կրանիտեայ թումբերով, և այլն, բնութեան և արուեստի սակաւագիւտ տեսարանաց մին կ՚ընծայէ. Նորա ՚ի ծովէ տեսիլն աննման է։ Քաղաքն թեթև մշուշով քողարկուած էր, գունդագունդ ամպերն իբրև սարաբեր գառանց խումբեր, քաղաքին կռնակը բարձրացած անտառին ծառոց գագաթը մակաղած էին։ Ծովը թէպէտ բոլորովին խաղաղ, այլ ոչ խոր յատակն արգելք էր մեծ նաւուն մտանելու նաւամատոյցին։ Նաւուն այս դրիցս մէջ, ճանապարհորդք առաւել զգալի էրպով կրնային վայելել բնութեան գեղեցիկ տեսարանը։ Արևելք բոլորովին մանիշակագոյն հագուած էր. ծովուն երեսն՝ կարծես նոյն գունով ներուն մեծ կապերտ մի փռուած։ Երկինք և ծով մեծ պատրաստութեան մէջ էին, համարեա թէ մեծապատիւ հիւրի մի գալստեան սպասելով. սակայն ճշմարտապէս կ՚արժէր այդ պատրաստութեանց՝ գալու հիւրն. արևելք տակաւ կարմիր, ատրաշէկ և փայլուն գոյն առաւ, քիչ ատենէն հրոյ ճառագայթներ երևցան ծովուն երեսը, ճանապարհորդք ստիպուեցան կրկնադիտակներն վար առնուլ. զօրաւոր և հրաբուրբոք աչք մի՝ կարծես նայեցաւ հորիզոնէն՝ որ շուտով սկսաւ առակի ձև առաւ. տեսնալու բան էր միգին և մշուշին հալածական փախչիլը, ծառոց վրայ մակաղեալ ամպոց արագ արագ ՚ի վեր բարձրանալը։ Եալըթա՝ փոքրիկ քաղաքն՝ հիանալի տեսքով, խաչապակ եկեղեցիներով, խումբ խումբ կնձաձև նոճիներով, գալարայեղց գիւղատուններով, ճեմելիքներով, իբրև մեծ ափսեի մի շարուած յախճապակի նաշխուն գաւաթներ, յայտնի և պայծառ երևեցաւ։ «Ի՞նչ գեղեցիկ տեսարան, որպիսի գիւղապատկեր», կամայ և ակամայ, մեքենաբար կը զրուցէին ճանապարհորդք, մանաւանդ ՚ի միգապատէն և ՚ի հեռաւոր հիւսիսայ եկաւորք, որոց համար նոր և անսովոր էր այս տեսիլը, որք չեն տեսած ոչ յՍկեղիրեկ դէպ ՚ի Պոլիս տանող հիանալու նեղուցը, և ոչ Նէապօլսոյ աննման ծոցը։ Մինչև առաւօտեան ժամը ութ մնաց չօգենաւն ՚ի Եալըթա, բեռ տալով և առնելով, և ապա մեկնեցաւ ՚ի Սեւաստապոլ՝ ծովափէն քերելով։

Ցակաւ Եալըթա եւս մնալով՝ մանրանկար պատկերի երևոյթ կը ստանար. իսկ առաջնեխ յերևան կու գային Լեւատոյ արքունի ապարանք, Օրիանդրիս անուանով աշխարհագիրն կը կոչէ Ճալիթա անուամբ։

[1] Նշանակելու կ՚արժէ՝ որ Եալըթա փոքրիկ քաղաքը, երկուասանէրորդ դարու Նուպիացի

տա՝ Կոստանդին Նախարարին Գիւղատունն, Ալուփքա՝ Վորոնցով (Ագռաւեան) կոմսին կրանիտեայ դղեակն, և այլոց մեծամեծ իշխանաց ամարանոցք, մինչև որ հասանք Ծովմ՝ Պոյտառ կոչուած կրճին կամ լերանց անցքին տոորտը։ Նշանաւոր է այս տեղս. շատ ճանապարհորդք 'ի Ցաւրիայ գալով, Ծովու կարճ ճանապարհին կը նախադասեն ցամաքի երկար ճամբան 'ի Սեւաստապոլէ՝ Եալբեթա անցնելու, միայն այս կրճէն անցնելու հաճութիւնը ղգալու համար։ Վասն զի խիտ առ խիտ անտառները քարուխիճ և օձապտոյտ ճանապարհով անցնելէն վերջը, երբ կը հասնի ճանապարհորդն այս Պոյտառ կամ Դուռն Պոյտառի կոչուած անցքին բերան, յանկարծ առաջը կը բացուի համատարած ծովը, մէկ կողմանէ ալիքներն՝ հորիզոնին վրայ՝ երկնից կցելով, միւս կողմանէ կանաչագեղ բլուրները փայփայելով՝ անհանգարտ կոհակք մինչև ցեալբեթա։

Ցառաջ վարելով ճանապարհը, կէս օրէն վերջը ժամը մէկին հասանք 'ի համաւաւորն Սեւաստապոլ։ Այս քաղաքս առաջին Արևելեան պատերազմէն մինչև երկրորդն՝ քսան և վեց տարի անխնամ մնալուն պատճառաւ, ցարդ ալիտաւոր տեսարան մի կը ներկայացընէ ճանապարհորդին. մեծամեծ բազմայարկ անծածք և աներդիք շէնքեր՝ իրրև մահագոյժ կանգուն կը մախներ, իրենց կոյր և անլոյս աչքերով և անդեղու բերանով, — անդուռն, և անփեղկ պատուհաններով, — յայտնի կը քարոզեն քաղաքին անցեալ փառքը, և առհասարակ անկայուն վիճակ իրաց աշխարհի։ Նոյնը կը քարոզէ Սեւաստապոլէ Եօթը վերստ հեռաւորութեամբ շինեալ փառն Փերսոնէս [1], որ նախ քան զԲիւզանդիոն հզօր հասարակապետութիւն, այժմ քարուքանդ հողերու տակ ծածկուած։

Ալ Ինքիրման որ նոյնպէս հեռաւորութիւն ունի 'ի Սեւաստապոլէ, որ երկաթի ճանապարհին վրայ կարկառեալ է իւր խոռոչաւոր քարանձաւներով, նոր լեզուով հին և սրբազան խրատս մի կու տայ ճանապարհորդին։ Խորհուրդ կու տամ, այդ տեղէն անցնելու ժամանակ՝ եթէ ոչ կօշիկներ հանել, գէթ գլուխ մերկացընել բանալ զի սուրբ է այդ տեղին առոգեալ քրբտամբ և արեամբ առաջին գարու հայրապետաց հաւատոյս մերոյ։ Հռովմայեցոց կայսրութեան ժամանակ Ղբրիմ՝ վայր աքսորանաց համարուելով՝ Ցրայանու և այլոց կայսերաց ատեն, Լատազովք քրիստոնէութեան, իբր քրէական յանցաւորք հոս աքսորուած են. ասա ճգնած և 'ի բերսոնէս ջրահեղց նահատակուած է Պողոս առաքելոյն աշակերտ Կղեմէս, որ 'ի շարս Հրովմայ Սրբազանից երրորդն է զկնի Ս. Պետրոսի։ Հոս՝ քարաժայռին մէջ քանդակուած սանդուխ մի՝ վեր կը հանէ զճանապարհորդը դէպ 'ի սրբոց խղիկներ. ուր կան ժայռին մէջ կոփած քանդակուած կրկին դեղեցիկ վկայարաններ. յորոց վայելչագոյնն Ս. Կղեմայ անունը կը կրէ. աւանդութիւնն կը վկայէ՝ որ սեղանին վրայ, կամարին մէջ, քանդակուած վայելչաձև խաչն՝ սրբոյն մատանց գործը լինի։ Այս մատուռն շատ դեղեցիկ է, համեմատս սիներով, և այլն։ Այսոր մատ փոքրիկ մատուռ մի ևս կայ, որ Մարախնոս քահանայապետին կ'ընծայուի, որ նոյնպէս աքսորուած է 'ի Հռովմայ'ի քարահանքս Ինքիրմանի։

Սեւաստապոլ իր պատմական մահարձանաք՝ Փերսոնէսիս և Ինքիրմանով, Մալախով բարձամբ և հրաչալի նաւահանգստով 26 տարի երեսի վրայ մնալէն վերջը, այժմ վերստին տերութեան մեծ խնամքով կը շինուի, կամ թէ զբուսցեմ իբրև փիւնիկ հաւ՝ իւր մխրէն կամ աւերակաց մէջէն՝ նորափետուր կը զարդարուի. վերջին երեք տարիներս՝ Կոստանդին Նախարարին Գիւղատունն, Ալուփքա՝ Վորոնցով (Ագռաւեան) կոմսին կրանիտեայ դղեակն, և այլոց մեծամեծ իշխանաց ամարանոցք, մինչև որ հասանք Ծովմ՝ Պոյտառ կոչուած կրճին կամ լերանց անցքին տոորտը։ Նշանաւոր է այս տեղս. շատ ճանապարհորդք 'ի Ցաւրիայ գալով, Ծովու կարճ ճանապարհին կը նախադասեն ցամաքի երկար ճամբան 'ի Սեւաստապոլէ՝ Եալբեթա անցնելու, միայն այս կրճէն անցնելու հաճութիւնը ղգալու համար։ Վասն զի խիտ առ խիտ անտառները քարուխիճ և օձապտոյտ ճանապարհով անցնելէն վերջը, երբ կը հասնի ճանապարհորդն այս Պոյտառ կամ Դուռն Պոյտառի կոչուած անցքին բերան, յանկարծ առաջը կը բացուի համատարած ծովը, մէկ կողմանէ ալիքներն՝ հորիզոնին վրայ՝ երկնից կցելով, միւս կողմանէ կանաչագեղ բլուրները փայփայելով՝ անհանգարտ կոհակք մինչև ցեալբեթա։

Ցառաջ վարելով ճանապարհը, կէս օրէն վերջը ժամը մէկին հասանք 'ի համաւաւորն Սեւաստապոլ։ Այս քաղաքս առաջին Արևելեան պատերազմէն մինչև երկրորդն՝ քսան և վեց տարի անխնամ մնալուն պատճառաւ, ցարդ ալիտաւոր տեսարան մի կը ներկայացընէ ճանապարհորդին. մեծամեծ բազմայարկ անծածք և աներդիք շէնքեր՝ իրրև մահագոյժ կանգուն կը մախներ, իրենց կոյր և անլոյս աչքերով և անդեղու բերանով, — անդուռն, և անփեղկ պատուհաններով, — յայտնի կը քարոզեն քաղաքին անցեալ փառքը, և առհասարակ անկայուն վիճակ իրաց աշխարհի։ Նոյնը կը քարոզէ Սեւաստապոլէ Եօթը վերստ հեռաւորութեամբ շինեալ փառն Փերսոնէս [1], որ նախ քան զԲիւզանդիոն հզօր հասարակապետութիւն, այժմ քարուքանդ հողերու տակ ծածկուած։

Ալ Ինքիրման որ նոյնպէս հեռաւորութիւն ունի 'ի Սեւաստապոլէ, որ երկաթի ճանապարհին վրայ կարկառեալ է իւր խոռոչաւոր քարանձաւներով, նոր լեզուով հին և սրբազան խրատս մի կու տայ ճանապարհորդին։ Խորհուրդ կու տամ, այդ տեղէն անցնելու ժամանակ՝ եթէ ոչ կօշիկներ հանել, գէթ գլուխ մերկացընել բանալ զի սուրբ է այդ տեղին առոգեալ քրբտամբ և արեամբ առաջին գարու հայրապետաց հաւատոյս մերոյ։ Հռովմայեցոց կայսրութեան ժամանակ Ղբրիմ՝ վայր աքսորանաց համարուելով՝ Ցրայանու և այլոց կայսերաց ատեն, Լատազովք քրիստոնէութեան, իբր քրէական յանցաւորք հոս աքսորուած են. ասա ճգնած և 'ի բերսոնէս ջրահեղց նահատակուած է Պողոս առաքելոյն աշակերտ Կղեմէս, որ 'ի շարս Հրովմայ Սրբազանից երրորդն է զկնի Ս. Պետրոսի։ Հոս՝ քարաժայռին մէջ քանդակուած սանդուխ մի՝ վեր կը հանէ զճանապարհորդը դէպ 'ի սրբոց խղիկներ. ուր կան ժայռին մէջ կոփած քանդակուած կրկին դեղեցիկ վկայարաններ. յորոց վայելչագոյնն Ս. Կղեմայ անունը կը կրէ. աւանդութիւնն կը վկայէ՝ որ սեղանին վրայ, կամարին մէջ, քանդակուած վայելչաձև խաչն՝ սրբոյն մատանց գործը լինի։ Այս մատուռն շատ դեղեցիկ է, համեմատս սիներով, և այլն։ Այսոր մատ փոքրիկ մատուռ մի ևս կայ, որ Մարախնոս քահանայապետին կ'ընծայուի, որ նոյնպէս աքսորուած է 'ի Հռովմայ'ի քարահանքս Ինքիրմանի։

Սեւաստապոլ իր պատմական մահարձանաք՝ Փերսոնէսիս և Ինքիրմանով, Մալախով բարձամբ և հրաչալի նաւահանգստով 26 տարի երեսի վրայ մնալէն վերջը, այժմ վերստին տերութեան մեծ խնամքով կը շինուի, կամ թէ զբուսցեմ իբրև փիւնիկ հաւ՝ իւր մխրէն կամ աւերակաց մէջէն՝ նորափետուր կը զարդարուի. վերջին երեք տարիներս

[1] Շնորհիւ հանգուցեալ (1883) փոխանախագահին Օտեսսայի հնագիտական ընկերութեան Ն. Մուրզաքէվի, հին քաղաքին յաստակը յերևան ելաւ, տեղ տեղ միւսիոն և մոզմարիոն, քանդակագործ սեանց խարիսխներ և խչակներ, և այլն։

digitised by A.R.A.R.@

բուս միլիոն 700էն աւելի մեծամեծ չէն. քեր, քան զառաջինս առաւել վայել. չութեամբ կը փայլին։ Կրանիտեայ սա. լայատակն՝ առաջուան կրանտան ամ. պի նման փոչին իջոյց, քաղաքին ամէն կողմ քաղցրահամ ջրոյ ազուռայք և շատրուանք՝ հարաւային բարի արևուն ներդործութիւնը մեզմելով՝ ոգի կու տան դալարեայ և ծառոց. միով բա. նիւ այդ բնութեան նշանաւոր անկիւ. նը՝ տակաւ պիտի ստանայ իւր վայե. լուչ կերպարանը, եթէ վերստին քան. դիչ ձեռք մի չապականէ զնա։

Շատ չի կենար Նաւն՝ի Պետերբուրգ. երկու ժամէն մեկնեցաւ յեւպատա. րիայ, ուր ժամը եօթին հասանք։ Այս քաղաքս թէպէտ և ունի իւր առանձին յատկութիւնները՝ մաքուր և առողջա. բար օդոյն և քաղցրահամ ջրոյն հետ՝ի միասին. ինչպէս կապտամարմր գուա. ներ, որոց միսն քաղցրաճաշակ լինելէն զատ, անուանի և յարգի է սոյա մար. թէն ընդ հասարէն Ռուսաստան. մե. ծամեծ աղահան լիճեր, և յոդացաւի դէմ աղային ցեխեր. սակայն և այն. պէս Ղրիմու յետամնաց քաղաքաց կարդէն է, յամր և դանդաղ առաջ կ՝երթայ։ Նշանաւոր է՝ի սմա փաղա. դմբեթի խան–ճամին,՝ի թաթարաց մնայեալ մկիթին. սակաւաթիւ են հոս աղգայինք, էջմիածնական Հայք ու. նին վայելուչ եկեղեցի, իսկ Հայ–կա. թոլիկք մատուռ մի փոքրիկ։ Նաւն ժամ մի հոս մնալէն վերջը, յառաջ վա. րեց ընթացքը դէպ յՕտեսսա, և 18 ժամ միակերպ ընթանալով՝ միւս կէս օր՝ ժամը 12ին հասանք յՕտեսսա։

Բ

ՅՕՏԵՍՍԱՅԷ ՄԻՆՉԵՒ ՅԿԱՄԵՆԻՑ

Օտեսսա՝՝՝ի Ռուսաց Հարաւային գե. ղեցկունի (юмаж краеабпуа) վերաձայ. նեալ, զի Հարաւային և նոր Ռուսիոյ մէջ նմանն չկայ, նոյնպէս ևս ընդ հա. մարէն Ռուսաստան, յետ մայրաքաղա. քին Պետրբուրգի՝ բարեչէն քաղաքաց առաջինն՝է վաճառաշահութեամբ ծաղ. կած։ Ինոնսուն տարի առաջ Օտեսսայի տեղ (1794) Հաճի–Պէյ անունով փոքրիկ գիւղ և ամրոց մի կար, ուսկից՝՝՝ի Լեհաստանէ և՝՝՝ի Ռուսաստանէ ա. ւարն և կողոպուտ՝՝՝ի Ցաճկաստան կ՝անցնէր. զի Հաճի–Պէյ՝ Ցաճկաց ա. մրոց էր։ Այժմ այդ փոքր գիւղին և ամրոցին տեղ կանգնուն կայ 250,000 բնակչոք փառաւոր քաղաք մի, որ նա. խանձարդ է Ֆրանկաց մայրաքաղաքին, յար և նման սալայատակով, ջրոց ազու. դանեռով ամէն կողմ, մարդերով, շա. տրուաններով, մեծագործ ճեմելեզք. ունի իրեն արքունի պալատը (palais royal), համալսարան, թանգարան, հնա. գիտաց ընկերութիւն, փառաւոր շէն. քեր, եկեղեցիք, և այլն։ Եկեղեցեաց մէջ Հռովմէականաց եկեղեցին փառաշէն է, և յաճախութեամբ պատուական քա. ղբրու՝՝՝ նմանութիւն կը բերէ վենետկոյ ճոխ և վայելչազարդ եկեղեցեաց։ Պա. կասն այնու ամենայնիւ, դեռ շատ հե. ռու է իւր նախատիպէն, շատ բան դեռ կը պակասի փարիզի հասնելու։ Վա. ճառականութիւնն մեծ է, մանաւանդ անգործ կամ հում ապրանքով, այն. պէս որ տարուէ տարի Օտեսսայի մէջ եղած շահավաճառն՝՝՝ որ 200 միլիոն բուբլեաց կը հասնի, կէսը՝՝՝ այն է 100 մի. լիոնն՝՝՝ արտասահման կ՝երթայ, ցորեն, իւղ, աղ, բուրդ, և այլն։ Օտեսսա կէս օր միայն մնացի. օգոստոս 19, երեկոյեան ժամը իններն, երկաթուղով ճամբայ ելայ դէպ՝՝՝ի Փոտոլիա։ Օտեսսայէ երկաթուղով մեկնողաց՝՝՝ի Փոտոլիա՝՝՝ խորհուրդ կու տամ, եթէ անպատ. ճառ փոթորկոյ հարկ չունին, ուրբաթ երեկոյի ընթացքով մեկնիլ, զի միւս օրեր՝՝՝ ինչպէս ինձ պատահեցաւ այս անգամ, իրայեացւոց բազմութիւնն՝՝՝ բոլոր ճանապարհին մէջ անհանգստու. թիւն և նեղութիւն կը պատճառեն. աստի մինչև ցկամենից կը վիտան որ. զիք Իրայելի. իսկ կամենից՝՝՝ որ երբեմն Հայոց վաճառաշահ քաղաք էր, այժմ բոյն է Հրէից։

ՅՕտեսսայէ կամենիցի մերձաւոր եր.

digitised by A.R.A.R.@

կաթուղղ կայսրանը Փրոպուրով քաղաքն է. անտի ցկամենից հարկ է կառաք երթալ. միւս օր կէս օրին հասայ 'ի Փրոբուրով. անկարելի էր նոյն օրը հասնիլ 'ի կամենից, զի դեռ 90 վերստ ճամբայ կար ընելու. Օտար և նոր աշխարհք էր ինձ համար Փոտոլիա, ցանկալի էր լոյս աչքով ճանապարհորդել. բարեպատեհ դէպք մի՝ այս նպատակիս նպաստաւոր եղաւ։ Օտեսա ծանօթանալով Սիմանովիչ մտկանուամբ բժշկին հետ, յանձնարարական նամակ մի տուաւ ինձ առ իւր եղբայրը, որ կալուածատէր էր Փրոբուրովէ 'ի կամենից ճանապարհին վրայ։

Երկաթուղղ կայսրանէն կառք մի վարձեցի մինչև Սիմանովիչի գիւղը, որ 15 վերստ էր, և երկու ժամէն հասայ հոն։ Շնորհակալութիւն մեծ՝ հիւրընկալ պարոնին, որոյ մարդասէր ասպընջականութիւնը վայելելով, գիշերս հոն անցընելէն վերջը, վաղ առաւօտու ճամբայ ելայ։ Օգն բարեխառն և քաղցր կը շնչէր, ցորենաշատ դաշտերն հընձուած, այլ ակաւին որաներն բարդ բարդ, դէզ դէզ դաշտայ վրայ էին։

Այն փոտոլիա կամ Ռուբայենա կոչուած աշխարհին մէջն էի, զոր տեղացի փոքր—Ռուս թարաս Շեւչենքոյ քերդողն՝ զանազան դաղարիկ տողերով երգած և գովասանած է. այն հայցատ և ջրարբի աշխարհն, որ համբաւբանոց է արեւմտեան Ռուսիոյ, բայց կեցած էր առաջս. այս այն աշխարհն էր՝ որոյ ծոցը՝ ըստ քերդողին՝ դգրչալով կը խայտայ ալեւոն Ցնեբեր։ Առաջ կ'երթայի՝ լայն ծառազարդ ճանապարհին վրայէն, որոյ վրայ հովանի կ'առնէին մեծամեծ բարոի, նշդարի, կակղի և հաստաբուն կեռասի ծառեր։ Դաշտին մշակներն նոյն պուտերին Շեւչենքոյի երգած « գռուզ մազերով քիզաքներն » էին, « մրայոն և սեաչեայ քիզաքուհիք », ցորենի որաները բեռնաւորած սայլերու վրայ 'ի կալ՝ կասելու կը տանէին։ Ճանապարհին վրայ մարդաչատ գեղեր, բարեկարգ անտառներ՝ մերթ ընդ մերթ իրարու կը յաջորդէին, պտղատու պարտէզներ առատ մեծամեծ խնձորներով և տանձերով և այլ պտղաբ. փարձեցի այդ պըտուղներուն համը, այլ տեսքերուն համեմատ չդտայ. զի հարաւայ բարկ ապրուն ճառագայթներէն զուրկ լինելով, ոչ Ղրիմու պտղոց քաղցրութիւնը ունին և ոչ հոտը։ Հանդիպած գեղերուս մէջ մոսնաւոր յիշատակելու արժանի է Թիննա կոչուածն, ուստի 40 վերստ է կամենից. փառաւոր է դիւղիս եկեղեցին, և համբաւաւոր 'ի փոտոլիա՝ հրաշագործ պատկերաւ Ցիրամոր։ Եկեղեցւոյն մեծապատիւ կանոնիկոս ժողովրդապետն Լբսեցքի, զրիմեցւոյ համար հետաքրքրական դէպք մի կարդաց եկեղեցւոյն տարեգրութեան մէջ, զոր կ'արժէ հոս յիշատակել։ Անկէ 100 տարի առաջ՝ ժամանակին ժողովրդապետն գրած է, որ Ղրիմու վերջին թաթարաց Շահան—Գերէկ խանն, Ռուսայ թերակղզոյս տիրելէն վերջը, Մոսկուա գնալու ժամանակ իջևանած է այս թիննա գիւղիս մէջ. եկեղեցւոյս ուսդ երեցն հիւրընկալելով զնա՝ ճաշ մի տուած է, առաջնորդարանին եւսեմեծամեծ կակղի ծառաց տուերին ներքի. դարեւոր կակղիք դեռ ևս կանգուն, մեկմ հովիկին չնչելով, ներդաշնակ խօշուն մի կը հանէին, իբր թէ հաստատելով կանոնիկոսին կարգացածը. Շահան—Գերեհի համար այսպէս կը գրէր տարեգիրն. « Շատ կարգաւորեալ մարդ էր, լատին և խոլացի լեզուները համարձակ կը խօսէր »։

Պատուական կանոնիկոսն չմոռաց՝ որ առանց իրեն մնա ճաշելու՝ առաջ երթամ. երբ ասացի թէ՝ Մուլթին կը մնամ. — Աւելի լաւ կը լինի, ասաց, զի ճրագի լուսով կամենից « առաւել չքեղ կ'երևնայ, քան ցորեկ ատեն »։ Երեք ժամ մնացի գիւղիս մէջ, այլ գոհ եմ մեծապէս, զի պատկառելի երիցուն կենցաղավարութիւնն ինձ մեծապէս չինութեան պատճառ եղաւ։ Քանի՞ քաղցր է լսել բաղմատրձ և խոհական վարդապետի խօսակցութիւնը։

Նախընթաց օրը կամենիցի քաղաքի

digitised by A.R.A.R.@

ֆայետոն մի ուղևորներ բերելով 'ի Թինոս, պարապ յետս պիտի դառնար. աւադ երէցն խորհուրդ տուաւ՝ փոխանակ փոստի, այդ ֆայետոնը վարձել. կառավարն ուժան գնով յօժարեցաւ տանել զիս, որով բաղդ ունեցայ նոյն օրը օգոստոսի 20ին, փառաւոր քառաձի ֆայետոնով մտնել, յետին ժամին, երբեմն մեր Անեցի Հայկազանց հռչակեալ քաղաքը։

Գ

ԿԱՄԵՆԻՑ

Հեռուէն չերևիր կամենից, Թէպէտ և բարձր ժայռի վրայ չինուած է. զի ես բարձրագոյնք զնա կը շրջապատեն։ Ցան վերատմացած, յայմէ ճանապարհին կ'երևի Հայք (Արմենէ) կոչուած գիւղն. որ ըստ վկայելոյ Անտոնի, հնախօսին կամենիցու, Հայոց սեփականութիւն տրուած է ժամանակաւ (1280) Լեւոն Դանելովիչ Կալիցիոյ Նախարարէն, Հայոց նմա մատուցած մեծամեծ ծառայութեանց փոխարէն. ասա՝ ժամանակ անցնելէն վերջը գաղթեր են Հայք 'ի կամենից։

Թէպէտ և այժմ գիւղիս մէջ Հայ չըկայ, սակայն լակ Արմենէ անունն քաղցր կը հնչէ յականջս ազգայնոյ։ Դեռ ես առաջ գնալով՝ յերևան ելաւ կամենից մասամբ, արուարձանաք, ապա իւր ամենայն պչրանաք, լուսաւորեալ 'ի վերուստ և 'ի ներքուստ։

Քաղաքն հեռուէն ճիշդ ամիսիթաներ ձև ունի. բարձր ժայռի վրայ. խիտ առ խիտ փողոցներով, կարգ կարգ տուներով. այս ժայռն օրինաւոր կղզի մի է, որոյ չորս կողմը կը պատէ Սմնթռիչ գետն, այնպէս որ քաղաք մտնելու համար, հարկ է կամըրջէ անցնիլ։ Ցանց պատուհաններն կարգաւ լուսաւորած էին, զի յետին ժամ էր, հեռուէն կարծես յերկինք կը հասնէր նոցա լոյսն. այս լուսերն կ'անդրադառնային Սմնթռիչի ջրերուն մէջ, այնպէս որ լուսաւոր գունտ մի կ'երևնար, համատարած և ընդարձակ մթութեան մէջ։ Քաղաքս այս ձևոյն մէջ տեսնելով միաքս ինկաւ պատուական կանոնիկոսին խօսքն, և սրտանց շնորհակալ եղայ հեռուէն։

Փոտոլիոյ գլխաւոր քաղաքն է կամենից, հին Պետրոգաւրոսի աւերակայ վրայ շինուած՝ Անեցի գաղթականաց ձեռքով, և 600 տարի ճանչցուած իբր Հայոց քաղաք։

Պարսպապատ է, բերդերով և աշտարակներով ամրացուցած. երբ կամըրջէ մի անցնելով կրկնայարկ բերդատունէն ներս մտաւ մեր կառքն, ձիոց սմբակաց տրոփիւնն, բերդին խուլ արձագանգն, սայլերդաց և կառավարաց կանչն և ազազակ, չէն և մեծ քաղաքի տպաւորութիւն գործեցին։ Թէպէտ և գաւառին գլխաւոր քաղաքն է, այլ մեծ քաղաք կարելի չէ զրուցել, բնակիչն հազիւ 20,000, տեղը նեղ, ժայռի վրայ կարգ ըստ կարգէ տներ։ Ցանկաւ Սմնթռիչի միւս եզերը կ'ընդարձակի քաղաքն՝ լայն փողոցներով և մեծ հրապարակներով։ Հին, կամ Սմնթռիչի մէջ ամիսիսուած Հայոց քաղաքն՝ իտալիոյ հին քաղաքաց ձևն ունի, կըբկին և եռայարկ տներ, սալայատակ նեղ փողոցներու վրայ. այդ պատճառաւ օդն միշտ ապականած է, միւս գլխաւոր պատճառն օդոյն ապականութեան իսրայելի կեղտատ սրդիքն են, որ ամէն կողմ էր վիտան, քաղաքին կիսէն աւելի բնակիչքն Հրեայք են։

Այլ ինձ նոր հայրենիք երևցաւ այդ քաղաքն՝ նոյն հասած դիշերս. այդ սրտահաճոյ զգացմանս ուրիշ պատճառ չկայ, բայց եթէ պատմական ճախութիւն և քաղաքութիւնք հին կամենիցի ազգայնոյ։

Կանգ առաւ զիս կրող ֆայետոնն՝ ընդարձակ, երկայնաձև, սալայատակ հրապարակին արևելեան ծայրը, փառաւոր կրկնայարկ շէնքի մ'առաջ։

Այդ այն հրապարակն էր՝ յորում շատ դարեր վեր վար ճեմել են Հայք, զոր լցուցել են արևելեան վաճառքով, որոյ չորս կողմը փառաւոր տներով զարդարել են. այդ հրապարակին վրայ

digitised by A.R.A.R.@

էր Հայոց դատարանն (Մագիստրատն), յորում Հայ դատաւորք մահու և կենաց վճիռներ տուել են. այդ հրապարակին արևելեան ծայրը, դէպ 'ի Հայոց փողոցը, դեռ ևս կանգուն կայ Հայոց փառաւոր եկեղեցին, հրաշագործ պատկերաւ Տիրամօրն Հայոց։ Այդ եկեղեցւոյն առաջնորդարանին կամ վարդապետանոցին դրան առաջ կանգ առած էր Ֆայետոնն. իսկոյն ընդ առաջ վազեց երիտասարդ մի, որ էր լուսարար եկեղեցւոյն, և իմ ճանապարհի պարկս կառքէն վար առնելով՝ առաջնորդեց ինձ առաջնորդարանին երկաթի դռնէն դէպ 'ի ներս, սանդուխներէ վեր ելնելով չէնքին երկրորդ յարկը. խնդրեց որ սակաւ մի սպասեմ. «Աւագ երէցն տունը չէ, ասաց, այլ շուտով կը դառնայ»։ Մինակ մնացի քանի մի վարկեան այդ անծանօթ չէնքին մէջ, որ իւր ամրակուռ կազմածովն, երկայն սրահովն և առանձին առանձին սենեկներով, ամէն սենեակ որմնամէջ դարանով, յայտնի կը ցուցնէր յորոց և ինչ վախճանաւ չինուիլը։ Նախ՝ չինողայ ճոխութիւնն յայտնի կ'երևնար, զի փող չէին թնայել ամլութեան և հաստատութեան մասին. իսկ առանձին դէմ ընդդէմ միմեանց սենեկներն՝ իրենց դարաններով, անբարբառ կը զրուցէին որ իրենք աբեղայից և վարդապետաց համար չինուած են։ Այլ ևս զուր տեղ փնտռեցի այդ տանը մէջ երբեմն բնակող Ռոշքան, Մուրատեան, Պոեփանեան, Վարդերեսեան, Տէր-Գաբրիէլեան, Թադոսեան վարդապետաց ըստուերը կամ շուքը՝ որ մէկ անկիւնէ երևան...։

Շուտով եկաւ եկեղեցւոյն երէցն Տէր Աղոյիսս Շէֆայնպի, լեհ ազգաւ, գոնէ այժմ այնպէս ճանչցուած. հաւանական է որ սա ևս հին Անեցւոց սերընդոցմէ լինի, այլ այնպէս սլլոյլած, որ քանի մի բառ հայերէն յօդելէն զատ, և մարդասէր հիւրընկալութենէն, որ ազգիս սեփական յատկութիւնն է, ամենևին այլ նշան չունէր հայութեան։

Հարկ եղաւ ինձ այդ հայաշէն և հայաբնակ վարդապետանոցին մէջ օտար լեզուաւ խօսիլ և հարցընել, մերձաւոր նպատակիս մասին։

Գիտէի արդէն որ Կամենիցի վերապետ Տիրամօր՝ Հայոց եկեղեցւոյն մէջ՝ մեծահանդէս ուխտօրէիս կը տեսնուի Պատուաւոր փոխման տօնն. համանուն եկեղեցւոյն մէջ տօնելով զփոխումն Կուսին 'ի Թէոդոսիա, կը փափաքէի մասնակցել նոյն տօնական հանդիսին 'ի տաճարի Աքանչելագործ Տիրամօրս 'ի Կամենից։

Տէր Աղոյիսս ինձ խնայուց՝ որ վաղը վերջն է հանդիսին։ Յոգնած էի ճանապարհէն, քաղցր քունն (հայրենի ըստացուածոց Ներքև), որոյ եղանակին մէջ տարբերութիւն չկայ, վերջ տուաւ մեր այլախօս բարբառին։

Կը շարունակուի։

Հ. ՔՍԻՐՈՎԲԷ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ



digitised by A.R.Á.R.@